Հաղորդում

«Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 25-28-րդ նիստերի վերաբերյալ (2011-2013թթ.)

2011-2013թթ. ժամանակահատվածում գումարվել է «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) չորս նիստ, որոնց ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել ու համաձայնեցվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) դեմ պայքարին վերաբերող՝ առավել կարևոր հետևյալ հարցերը.

1. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի 2013-2015թթ. ազգային ռազմավարության հետ կապված, Հանձնաժողովը քննարկել և հաստատել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի 2013-2015թթ. ազգային ռազմավարությունը»: Այս առնչությամբ տրվել են հանձնարարականներ ՖԴԿ-ին նոր ռազմավարական վերլուծությունների արդյունքներից բխող փոփոխությունները Միջգերատեսչական հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելու վերաբերյալ:

2. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքում և այլ օրենքներում փոփոխությունների և լրացումների կատարում նախատեսող օրենսդրական փաթեթի (այսուհետ՝ Օրենսդրական փաթեթ) հետ կապված, Հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել Օրենսդրական փաթեթի մշակման, շահագրգիռ մարմինների կարծիքների ամփոփման, ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացման հետ կապված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն: Կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ընդունվել են ի գիտություն: Հանձնաժողովին պարբերաբար ներկայացվել է թարմացված տեղեկատվություն Օրենսդրական փաթեթի շրջանառության ընթացքի, այդ թվում՝ շահագրգիռ գերատեսչություններից

ստացված կարծիքների և առաջարկների, վեր հանված խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ:

3. ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային վերլուծության իրականացման մեթոդաբանության հետ կապված, Հանձնաժողովը քննարկել և հավանության է արժանացրել «Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային (ռազմավարական) վերլուծության իրականացման» նոր ձեռնարկը: Այս առնչությամբ ՖԴԿ-ին առաջարկվել է ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների հետ համագործակցությամբ, հավաքված վիճակագրական տվյալների և այլ տեղեկատվության հիման վրա ամփոփել ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային (ռազմավարական) վերլուծության արդյունքները և ներկայացնել Միջգերատեսչական հանձնաժողովին:

4. Վարշավայի կոնվենցիայի իմպլեմենտացման և ինքնագնահատման հետ կապված, Հանձնաժողովն ի գիտություն է ընդունել Վարշավայի կոնվենցիայի դրույթների իմպլեմենտացման անհրաժեշտության վերաբերյալ տեղեկատվությունը: Այս առնչությամբ առաջարկվել է ստեղծել աշխատանքային խումբ: Հանձնաժողովին քննարկմանն է ներկայացվել տեղեկանք «Վարշավայի կոնվենցիայի ինքնագնահատման արդյունքների վերաբերյալ», որի առնչությամբ արձանագրվել է, որ Վարշավայի կոնվենցիայի ինքնագնահատման արդյունքներով կոնվենցիայի որոշ դրույթներին ՀՀ օրենսդրության անհամապատասխանության և մասնակի համապատասխանության հարցերը կքննարկվեն և համապատասխան առաջարկներ կներկայացվեն 2014թ. Կողմերի համաժողովի կողմից Վարշավայի կոնվենցիայի դրույթներին ՀՀ համապատասխանության գնահատումից հետո:

5. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում տարեկան հաշվետվությունների հետ կապված, տարեկան կտրվածքով Հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում իրականցված աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն: Հանձնաժողովը քննարկել և ի գիտություն է ներկայացված տարեկան հաշվետվությունները:

6. Միասնական տեղեկատվական տիրույթի ստեղծման հետ կապված, Հանձնաժողովը համակարգել է Միասնական տեղեկատվական տիրույթի ստեղծման և ներդրման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Հանձնարարականներ են տրվել Միասնական տեղեկատվական տիրույթի ներդրման ընթացքը համակարգող աշխատանքային խմբի անդամներին՝ ներկայացնելու Միասնական տեղեկատվական տիրույթի համակարգի միջոցով փոխանակվող տվյալների ցանկը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, նշված ցանկում ներառված տվյալների փոխանակման համար հիմք հանդիսացող իրավական ակտերի նախագծերը: Հանձնաժողովն ի գիտություն է ընդունել հանձնարարականների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները:

7. Էգմոնտ խմբի 19-րդ լիագումար նիստի կազմակերպման հետ կապված, Հանձնաժողովին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացել Էգմոնտ խմբի 19-րդ լիագումար նիստի կազմակերպման աշխատանքների ընթացքի, իրականացման վայրի, նախատեսվող միջոցառումների վերաբերյալ: Հանձնաժողովն ի գիտություն է ընդունել ներկայացված տեղեկատվությունը:

8. Այլ հարցերից կարևորվում են Հանձնաժողովին տեղեկատվության տրամադրումը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում Հայաստանի Հանրապետության առաջընթացի հաշվետվության, Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից ՀՀ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի 4-րդ փուլի գնահատման համար իրականացվող նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ: